ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱՖԱՐՈՅՖՅԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 81 - 82 (16170) ՇԱԲԱԹ, 19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2013 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ԵՍ ՉԵՄ ՀԵՌԱՆՈՒՄ, ԱՅԼ ԱՆՑՆՈՒՄ ԵՄ ԱՎԵԼԻ ԿԱՐԵՎՈՐ ԱՍՊԱՐԵԶ»

Հոկտեմբերի 17-ին Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին հանդիպում ունեցավ Վրաստանի տպագիր եւ էլեկտրոնային լրատվամիջոցների ղեկավարների հետ: Հանդիպմանը վարչապետը մանրամասն խոսեց իր գլխավորած կառավարության առաջիկա ծրագրերի, հոկտեմբերի 27-ին անցկացվելիք նախագահական ընտրությունների, երկրի ներքին եւ արտաքին քաղաքական կուրսի ու բազում այլ հարցերի մասին:

ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԿԱՐԳԱՎՈՐԵԼ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ

Վրաստանը պետք է կարողանա կարգավորել հարաբերությունները Ռուսաստանի հետ: Այդ մասին վարչապետ Բիձինա Իվանիշվիլին հայտարարել է Թբիլիսիում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ: Նրա խոսքերով, «Ռուսաստանի նկատմամբ Վրաստանի դիրքորոշումը բացարձակ պրագմատիկ եւ սկզբունքային է»:

«Մենք պետք է կարողանանք կարգավորել հարաբերությունները Ռուսաստանի հետ, դա շատ ու

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ը՝ ՍՎԵՏԻՑԽՈՎԼՈԲԱ

ՀԱՎԱՏԻ ՈՒԺԻ ԵՎ ԲԱԶՄԱԴԱՐՅԱ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ ՏՈՆԸ

Հոկտեմբերի 14-ին Համայն Վրաստանը նշեց Մցխեթոբա-Սվետիցխովլոբայի տոնը: Տոնակատարության կենտրոնը Վրաստանի հին մայրաքաղաք Մցխեթայում գտնվող Սվետիցխովելիի տաճարն է, որը հանդիսանում է քրիստոնեական Վրաստանի խորհրդանիշը:

Այդ օրը Մցխեթայում, Սվետիցխովելի Տաճարում, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի կողմից մատուցվեց Սուրբ պատարագ, որին ներկա էր Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին՝ տիկնոջ՝ Եկատերինա Խվեդելաձեի հետ:

Տոնի առթիվ, վարչապետը շնորհավորեց Վրաստանի բնակիչներին: Նա նշեց, որ Սվետիցխովլոբան իրենց հավատի խորհրդանիշն է, վրաց ազգի բազմադարյա մշակույթի եւ հավատի ուժի խորհրդանիշը:

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻՈՒՄ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻՆ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ ԵՎ ՆԻՆՈՇՄԻՆԴԱՅՈՒՄ

ՎԱՐՉԱՊԵՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ

Հոկտեմբերի 15-ին «Վրացական երազանք» խմբակցության նախագահի թեկնածու Գիորգի Մարգվելաշվիլին, Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլու հետ միասին, նախընտրական հանդիպում անցկացրեց ախալքալաքցի ընտրողների հետ: Նշենք, որ սա վարչապետի կարգավիճակում Բիձինա Իվանիշվիլու առաջին այցն էր Ախալքալաքի: Վերջին անգամ նա այցելել էր անցյալ տարի՝ խորհրդարանական ընտրությունների նախաշեմին:

Հանդիպումն անցկացվեց Ախալքալաքիի կենտրոնական հրապարակում: Ներկաներին ուղղված իր խոսքում Վրաստանի վարչապետը ռուսերենով ցանկություն հայտնեց, որ ախալքալաքցիներն իրենց ձայները տան իր կողմից հովանավորած թեկնածու Գիորգի Մարգվելաշվիլուն:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԹԲԻԼԻՍԻ-ԵՐԵՎԱՆ

ԿԱՐԵՎՈՐՎԵՑ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐԻ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 11-ին, «էրեբունի-Երեւան-2795» տոնակատարությանը մասնակցելու նպատակով, Երեւանում էր գտնվում Թբիլիսիի քաղաքապետարանի պատվիրակությունը՝ քաղաքապետ Գիգի Ուգուլավայի գլխավորությամբ:

Տոնական միջոցառումների ավարտից հետո, կայացավ Թբիլիսիի եւ Երեւանի քաղաքապետերի պաշտոնական հանդիպումը:

Հանդիպմանը Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը բարձր է գնահատել երկու մայրաքաղաքների միջեւ ձեւավորված բարեկամական հարաբերությունները եւ ընդգծել քաղաքապետարանի պատրաստակամությունը՝ փոխգործակցությունն ընդլայնելու եւ ամրապնդելու հարցում:

Քաղաքապետը նշեց նաեւ, որ վերջերս Երեւանի քաղաքապետարանի պատվիրակության՝ Թբիլիսիի օրվա կապակցությամբ Վրաստանի մայրաքաղաք կատարած այցի շրջանակում ձեռք են բերվել որոշակի պայմանավորվածություններ, որոնք կապահովեն համագործակցության տեսանելի արդյունքներ:

Գիգի Ուգուլավան, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության եւ հրավերի համար, ի դեմս

Երեւանի քաղաքապետի, շնորհավորեց բոլոր երեւանցիներին մայրաքաղաքի 2795-ամյակի կապակցությամբ եւ հույս հայտնեց, որ առաջիկայում, Թբիլիսի-Երեւան համագործակցության արդյունքում, կմշակվեն ու կիրականացվեն քաղաքային տնտեսության կառավարման հետ կապված կոնկրետ ծրագրեր:

ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՄՓՈՓՎԵԺԻՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հոկտեմբերի 11-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն այցելեց Սփյուռքի նախարարություն եւ մասնակցեց նախարարության 5-ամյա գործունեության ամփոփմանը նվիրված միջոցառմանը: Մինչ այդ, նա շրջայց կատարեց նախարարությունում, դիտեց Սփյուռքի նախարարության անցած 5 տարիների գործունեությունը ներկայացնող ցուցահանդեսը:

Հանդիպմանը ներկա էին համահայկական կազմակերպությունների, Սփյուռքի նախարարության գործընկեր կառույցների, հոգեւոր դասի ներկայացուցիչներ, Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանն իրենց նպաստը բերած պետական, քաղաքական, հասարակական գործիչներ, մտավորականներ, նախարարության աշխատակիցները: Միջոցառմանը կատարած աշխատանքի հաշվետվությամբ ելույթ ունեցավ Հայաստանի Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԸՆԴԳԾՎԵԺ ՓՈԽՇԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ՎՐԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 15-ին տեղի է ունեցել Վրաստանի գյուղատնտեսության նախարարի հանդիպումը Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանի հետ:

«Մենք կարեւորում ենք Վրաստանի հետ փոխհարաբերությունների ամրապնդումն ու խորացումը եւ քայլեր կձեռնարկենք, որպեսզի այդ կապերը կոնկրետ արդյունքներ տան»,- ողջույնի խոսքում նշեց Հայաստանի կառավարության ղեկավարը:

Վարչապետը կարեւորեց երկու երկրների տնտեսավարող սուբյեկտների համար փոխգործակցության նպաստավոր միջավայրի ձեւավորումը եւ տեղեկատվության փոխանակումը:

Վրաստանի գյուղատնտեսության նախարարը շնորհակալություն հայտնեց Հայաստանի վար-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԷԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Հոկտեմբերի 11-ին, Եվրոպական Միության ծրագրի շրջանակներում, Ստեփանավանի մշակույթի պալատում տեղի ունեցավ «Զարգացնելով տարածաշրջանային համագործակցությունը արեւելյան գործընկերության երկրներում. Վրաստան-Հայաստան տարածաշրջանային համագործակցության ծրագիր» տարածաշրջանային համաժողովը:

Համաժողովին հրավիրված էին մոտ 100 հասարակական կազմակերպությունների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ՝ Վրաստանի ու Հայաստանի սահմանամերձ 5 մարզերից. Տավուշ, Լոռի, Շիրակ (Հայաստան) ու Սամցխե-Ջավախեթի

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԱՄՓՈՓՎԵԺԻՆ «ՆԻՆՈՇՄԻՆԴԱ-ԲԱՎՐԱ» ԱՆՑԱԿԵՏԻ ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հոկտեմբերի 15-ին, Թբիլիսիի «Ռեդիսոն Բլու Իվերիա» հյուրանոցում, ամփոփել են 18-ամսյա այն նախագծի արդյունքները, որոնք իրականացվել են վրաց-հայկական սահմանի «Նինոծմինդա-Բավրա» անցակետում:

Նախագիծը ֆինանսավորում է Եվրամիությունը, իսկ այն իրացնում է ՄԱԿ-ի զարգացման YNDP ծրագիրը:

Ինչպես լրագրողներին հայտնել է Վրաստանում Եվրամիության ներկայացուցչության ղեկավար Ֆիլիպ Դիմիտրովը, սա շատ հա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՕՐԵՆՍԴԻՐ

ՉԻ ԲԱՑԱՌՎՈՒՄ, ՈՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՉՀԱՍՏԱՏԻ ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ

Վրաստանի օրենսդրական մարմնի ղեկավար Դավիթ Ուսուփաշվիլին չի բացառում, որ խորհրդարանը չի հաստատի վարչապետի պաշտոնում Բիձինա Իվանիշվիլու ներկայացրած թեկնածուին:

«Վարչապետի թեկնածուին պետք է ընտրի եւ նախագահին ներկայացնի խորհրդարանական մեծամասնությունը: Իվանիշվիլին դեռ իր համար էլ որոշում չի ընդունել: Նա մնում է կոալիցիայի լիդեր, քանի դեռ զբաղեցնում է վարչապետի պաշտոնը: Հետեւաբար, կոալիցիայի լիդեր Իվանիշվիլին ակտիվ մասնակցություն կցուցաբերի այն հարցի լուծմանը, թե ով կլինի ապագա վարչապետը»,- հայտարարեց Դավիթ Ուսուփաշվիլին: Նա չի բացառում, որ ներկայիս վարչապետի առաջադրած թեկնածուն կարող է չհաստատվել խորհրդարանի կողմից: «Եթե անձամբ ինձ Իվանիշվիլին չհամոզի, որ ներկայացված թեկնածուն կարող է կատարել այն գործառույթներն ու դերը, որոնք ներկայումս դրված են իր վրա, ապա հնարավոր է ինձ մոտ ծագեն հարցեր եւ այլ կարծիք»,- հայտարարեց խորհրդարանի խոսնակը:

Նրա խոսքերով, մինչեւ հոկտեմբերի 27-ը վարչապետի թեկնածության հարցով խորհրդատվությունները դռնփակ են, եւ նրա անունը ոչ մեկին հայտնի չէ:

ՇՐԱԳԻՐ

ՆՈՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՎՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ

Վրաստանի կրթության նախարարությունը ինը նոր դպրոցների շինարարության համար հայտարարել է մրցույթ: Այդ մասին հայտարարեց կրթության գերատեսչության ղեկավար Թամար Սանիկիձեն:

Վրաստանի էներգետիկայի, ֆինանսների, սպորտի եւ տարածաշրջանային զարգացման նախարարների հետ անցկացրած մամլո ասուլիսում Թամար Սանիկիձեն ընդգծեց, որ արդեն ավարտվել է նոր դպրոցների նախագծման առաջին փուլը, եւ արդեն մեկնարկում է երկրորդ՝ շինարարության փուլը:

Իր հերթին, ֆինանսների նախարար Նոդար Խադուրին ընդգծեց այն հանգամանքի կարեւորությունը, որ պետությունը լուրջ ներդրումներ է իրականացնում կրթության համակարգում:

Նրա խոսքերով, դպրոցների շինարարության համար բյուջեում նախատեսված է 62 միլիոն լարի:

Վրաստանի էներգետիկայի նախարար Կախի Կալաձեն հայտարարեց, որ իր գլխավորած գերատեսչությունը ստանձնում է նորակառույց դպրոցների գազիֆիկացման եւ էլեկտրաֆիկացման աշխատանքների կատարումը:

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ՆԱԽԱՐԱՐԸ ԱՄՀ-Ի ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆ ՉԷ

Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին համաձայն չէ Արժույթի միջազգային հիմնադրամի հաշվետվության հետ, ըստ որի, ԱՄՀ-ն հերթական անգամ նվազեցրել է Վրաստանի տնտեսական աճի ցուցանիշը՝ այն հասցնելով մինչեւ 2,5 տոկոսի:

Նշենք, որ վերոնշյալ ցուցանիշը 2013 թվականի համար փոխվել է արդեն երկրորդ անգամ: Տարվա սկզբին ԱՄՀ-ն կանխագծում էր 6 տոկոսի աճ, իսկ հունիսին այդ ցուցանիշը իջեցրել էր մինչեւ 4 տոկոսը:

Հիմնադրամի փորձագետները էկոնոմիկայի աճի ցուցանիշի նվազեցումը կապում են մասնավոր ներդրումների եւ վարկերի նվազեցման, ինչպես նաեւ բյուջետային կրճատումների հետ: Հաշվետվության մեջ խոսվում է նաեւ 2014 թվականի կանխագծումների մասին: ԱՄՀ-ի գնահատումներով, հաջորդ տարի էկոնոմիկայի աճը կկազմի 5 տոկոս:

«Մենք, բնականաբար, աշխատել ենք այդ կանխագծումների ուղղությամբ եւ համաձայն չենք: Սակայն զարմանք է հարուցում այն փաստը, որ բացարձակապես անհավանական կանխագծումներ են արվել զբաղվածության նվազեցման հարցում: Հարկ եմ համարում նշել, որ տվյալ հարցի կապակցությամբ Վրաստանի կառավարության, ֆինանսների նախարարության հետ ոչ մի հաղորդակցական կապ չի եղել, եւ փաստացի ոչ մի տվյալներով այդ կանխագծումը չի հաստատվում»,- նշեց Նոդար Խադուրին:

ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՃԸ ԿԱԶՄԵԼ Է ՄՈՏ 2 ՏՈԿՈՍ

Վրաստանի վիճակագրական ազգային ծառայության տեղեկատվությամբ, 2013 թվականի առաջին կիսամյակում, նախորդ տարվա համեմատությամբ, համախառն ներքին արտադրանքի աճն ավելացել է 1,9 տոկոսով, իսկ ետընթացը կազմել է 0,1 տոկոս:

Նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ, 2013 թվականի երկրորդ եռամսյակում ՀՆԱ-ի աճը կազմել է 1,5 տոկոս:

ՀՆԱ-ի կառույցներում առավել մեծ տեսակարար կշիռ ունեն արդյունաբերությունը՝ 16,8 տոկոս, առեւտուրը՝ 16,7 տոկոս, տրանսպորտը եւ կապը՝ 10,9 տոկոս, պետական կառավարումը՝ 10,5 տոկոս, գյուղատնտեսությունն ու ձկնարդյունաբերությունը՝ 9,5 տոկոս, եւ առողջապահությունը՝ 6,1 տոկոս:

Մեկնաբանելով ՀՆԱ-ի 1,9 տոկոս աճի վերաբերյալ՝ Վրաստանի վիճակագրական ազգային ծառայության տեղեկատվությունը, Վրաստանի էկոնոմիկայի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին հայտարարել է, որ երկրում նախագահական ընտրություններից հետո կսկսվի տնտեսական ինտենսիվ աճ: «Ես չեմ գտնում, որ 3 տոկոսը տնտեսական աճի համար լավ ցուցանիշ է: Բնականաբար, գերադասելի կլիներ, եթե այն կազմեր կանխագծած 6 տոկոսը, սակայն, ցավոք, տարբեր գործոնների պատճառով դրան անհնար է հասնել: Թեպետ մեզ մոտ վավերացվել է իրական աճ, ինչը նախատեսում է նոմինալ եւ արժեզրկման ցուցանիշի նվազեցում: Էկոնոմիկան աճում է եւ չի կրճատվում: Ճշգրտված տվյալներով, առաջին եւ երկրորդ եռամսյակներում մեզ մոտ տնտեսական աճը կազմել է 1,9 տոկոս, եւ զգալի է դրա ավելացման միտումը»,- հայտարարել է նախարարը:

Նրա խոսքերով, տնտեսական աճը մինչեւ տարեվերջ կարող է հասնել 2,5-3 տոկոսի: Գիորգի Կվիրիկաշվիլու խոսքերով, երկրում դրա հնարավորություններն առկա են: Ըստ նրա, առանձին խոշոր ընկերություններ սպասում են երկրում քաղաքական կայունացման հաստատմանը:

ՔՐԵԱԿԱՆ

ՆՈՐ ՀԱՆՑԱՆՇԱՆՆԵՐ՝ ԶՈՒՐԱԲ ԺՎԱՆԻԱՅԻ ՄԱՀՎԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Վրաստանի գլխավոր դատախազ Արչիլ Կբիլաշվիլին հաստատել է նոր հանցանշանների առկայությունը երկրի վարչապետ Զուրաբ Ժվանիայի մահվան գործում, սակայն նշել է, որ դեռեւս վաղ է խոսել գործը բացահայտելու մասին:

«Կարող եմ ասել, որ գործում իրոք ի հայտ են եկել նոր հանցանշաններ, նոր հանգամանքներ եւ, համապատասխանաբար, նոր վարկած: Հետաքննությունն իրականացվում է ինտենսիվորեն եւ բոլոր վարկածներն ստուգվում են: Այս պահին մենք չենք բացառում ոչ մի վարկած, քանի որ այդ հանցանշանները եւ հանգամանքները կարող են տարբեր կերպ մեկնաբանվել»,- հայտարարել է Կբիլաշվիլին:

Ժվանիայի հետ մեկտեղ զոհված Ռաուլ Յուսուպովի հայրը՝ Ռաշուր Յուսուպովը, ավելի վաղ հայտարարել է, որ, այդ գործով հետաքննությունը շարունակելու նպատակով, չի բացառվում նրա դիակի արտաշիրմումը: «Այս պահին կատարվում է հանցանշանների կրկնական փորձաքննություն, սակայն, եթե պատկերը չվերականգնվի, ապա վերջնական որոշումը կդառնա դիակների արտաշիրմումը»,- ասել է Յուսուպովը:

Նրա խոսքով, հետաքննությունն արդեն կիսով չափ բացահայտել է այս գործը եւ կրկին հարցաքննել վկաների մեծ մասին: Յուսուպովը չի բացառում գործը դժբախտ պատահարից սպանության վերաորակումը:

«Իմ որդու հագուստի վրա ցեխ է եղել, որը չէր կարող այնտեղ հայտնվել, եթե նա գտնվել է բնակարանում»,- նշել է նա:

Հիշեցնենք, որ Վրաստանի նախկին վարչապետ Զուրաբ Ժվանիային 2005 թվականի փետրվարի լույս 3-ի գիշերը Քվեմո Քարթլիի տարածաշրջանի փոխնահանգապետ Ռաուլ Յուսուպովի հետ մեռած էին գտել Թբիլիսիի բնակարաններից մեկում: Ըստ հետաքննության պաշտոնական վարկածի, ողբերգական մահվան պատճառ էր դարձել դժբախտ պատահարը:



ՈՒԿՐԱԻՆԱ ՎԵՐԱՑՎԵՑ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ուկրաինայի նախագահ Վիկտոր Յանուկովիչը հրամանագիր է ստորագրել, որով ուկրաինական բանակն անցել է պայմանագրային հիմունքներին եւ այլեւս պարտադիր զորակոչ չի լինելու: Միեւնույն ժամանակ, պահպանվել է հավաքագրումը ներքին զորքերում:

Յանուկովիչը պարզաբանել է, որ այս քայլին են գնացել, քանի որ ժամանակակից ռազմատեխնիկային անհրաժեշտ են պրոֆեսիոնալներ, իսկ պայմանագրային բանակը հնարավորություն կտա այդ պրոֆեսիոնալներին հանձնել երկրի անվտանգությունը:

Ուկրաինայի Պաշտպանության նախարարի ներկայացրած տվյալներով, ներկայումս երկրի բանակում ծառայում է 180 հազար մարդ, որից 100 հազարը՝ թիկունքային պաշտպանության ստորաբաժանումներում: Ակնկալվում է, որ պայմանագրային հիմունքների անցնելուց հետո, բանակում կծառայի 70 հազար, իսկ թիկունքայինում՝ 50 հազար մարդ:

ԱՄՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄՆ ԱՎԱՐՏՎԵՑ

ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման ստորագրել է բյուջեի նախագիծը, որ թույլ է տալիս բարձրացնել երկրի պետական պարտքի վերին սահմանը եւ վերականգնել պետական կառույցների աշխատանքը: Առավել վաղ, փաստաթուղթը հավանության էր արժանացել ԱՄՆ Կոնգրեսի վերին ու ստորին պալատներում:

Հիշեցնենք, որ բյուջեի նախագծի «փոխզիջումային» տարբերակն ընդունվել է ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի եւ Հանրապետական կուսակցության ներկայացուցիչների միջեւ տեւած երկարատեւ բանակցությունների արդյունքում: Կողմերը փոխհամաձայնության են եկել այն բանից հետո, երբ Սպիտակ տունը համաձայնել է վերանայել առողջապահության համակարգի բարեփոխումների համար նախատեսված ծախսերը: Հատկանշական է, որ, պետական պարտքի վերին սահմանի բարձրացման շնորհիվ, ԱՄՆ-ին հաջողվեց խուսափել տեխնիկական դեֆոլտից: Ընդունված օրենսդրությամբ, կառավարությունը կֆինանսավորվի մինչեւ հաջորդ տարվա հունվարի 15-ը, իսկ պետական պարտքի առաստաղը կբարձրացվի մինչեւ փետրվարի 7-ը:

ՄԱԿ ԸՆՏՐՎԵՑԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԻՆԳ ՈՉ ՄՇՏԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընտրել է Անվտանգության խորհրդի հինգ ոչ մշտական անդամ երկրների: Դրանք են՝ Սաուդյան Արաբիան, Չադը, Նիգերիան, Չիլին ու Լիտվան:

Նոր ընտրված երկրները 2014 թվականի հունվարի 1-ից Անվտանգության խորհրդում կփոխարինեն Մարոկկոյին, Տոգոյին, Պակիստանին, Գվատեմալային եւ Ադրբեջանին:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ունի վետոյի իրավունքով օժտված հինգ մշտական անդամ՝ Միացյալ Նահանգները, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Ռուսաստանը եւ Չինաստանը, ինչպես նաեւ 10 ոչ մշտական անդամ:

ՌՈՒՍԱՍՏԱՆ ՍԿՍՎԵԼ Է ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերի 17 լույս 18-ի գիշերվա ընթացքում շուրջ 2 հազար միգրանտներ են ստուգման համար տարվել Մոսկվայի ոստիկանության բաժանմունքներ: Այդ մասին հայտնել են ՌԴ մայրաքաղաքի ՆԳ նախարարության վարչության մամուլի ծառայությունում:

«Նրանցից ավելի քան 140-ին վարչական պատասխանատվության են ենթարկել միգրացիոն օրենսդրությունը խախտելու համար»,- ասված է հաղորդագրության մեջ: Միայն Արեւելյան Բիրյուլեւոյի երկու բնակելի շենքերում ձերբակալվել է շուրջ 150 օտարերկրացի:

Միգրանտների շուրջկալները վերսկսվել են այն բանից հետո, երբ ադրբեջանցի մարդասպան Զեյնալովը Արեւմտյան Բիլյուլեւոյում դանակահարեց եգոր Շչերբակովին:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԿՐԹԱԿԱՆ

ՈՉ ՎՐԱՑԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԱՎԵԼԱՑԵԼ Է ՎՐԱՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԹԻՎԸ

Ազգային փոքրամասնություններով բնակեցված շրջանների դպրոցներում ավելացել է վրաց լեզվի ուսուցիչների թիվը:

Վերապատրաստված կադրեր են առաքվում այն գյուղեր, որտեղ պետական լեզվի դասավանդումը պարտադիր է: Ծրագրի շրջանակներում, աշխատանքներ են տարվում նաեւ դասագրքերի կազմման ուղղությամբ: Այդ մասին հայտնի դարձավ հանդուրժողականության եւ քաղաքացիական ինտեգրման հարցերով ազգային խորհրդաժողովի շրջանակներում անցկացված միջգերատեսչական հանձնաժողովի նիստին: Խորհրդաժողովին մասնակցում են տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներ:

Հանձնաժողովի նիստին քննարկվել են պետական լեզվի ուսուցման եւ ընդհանրապես կրթության հետ կապված հարցեր, ինչպես նաեւ նախորդ տարիներին իրականացված եւ ծրագրված նախագծերի թեմաները:

«Միջգերատեսչական հանձնաժողովի նիստին մենք քննարկել ենք պետական լեզվի դասավանդման հարցը: Դա մեր գործունեության գլխավոր ուղղությունն է եւ սահմանադրական պահանջը: Մենք աշխատում ենք նոր հիմնադրույթի շուրջ, ըստ որի լիարժեք կրթությունը հաջողության նախապայմանն է: Իսկ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար պետական լեզվի իմացությունը նաեւ առաջընթացի գրավականն է»,- հայտարարեց վերահինտեգրման հարցերով Վրաստանի պետնախարարի տեղակալ Քեթեւան Ցիխելաշվիլին:

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է ՀԱՆԳԻՍՏ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏ

ԵԱՀԿ մարդու իրավունքների եւ ժողովրդավարական ինստիտուտների հարցերով բյուրոյի միջանկյալ զեկույցի համաձայն, Վրաստանում ներկայիս նախագահական քարոզարշավը, նախորդի համեմատ, ավելի հանգիստ է:

Փաստաթղթում նաեւ ընդգծվում է, որ խորհրդարանական ընտրություններին նախորդող ժամանակահատվածի համեմատ, լրատվամիջոցները ավելի պակաս բեւեռացված են: ԵԱՀԿ առաքելության դիտորդների կարծիքով, լրագրողներն իրադարձություններն ավելի չեզոք տեսանկյունից են լուսաբանում:

Իր հերթին, Հարավային Կովկասում ու Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ապաթուրայը հայտարարել է, որ ՆԱՏՕ-ն ակնդետ հետեւելու է Վրաստանի առաջիկա ընտրությունների ընթացքին: Ապաթուրայը հավելել է, որ ՆԱՏՕ-ն սերտորեն կհամագործակցի վրաց ժողովրդի ընտրյալի հետ. «Մենք շատ ուշադիր հետեւում ենք գործընթացներին: Նախագահական կամպանիայի ընթացքում չի լինի մեր կողմից որեւէ միջամտություն: Դա կլինի Վրաստանի ընտրությունը, վրաց ժողովրդի ընտրությունը: Մենք շատ սերտորեն կհամագործակցենք նրա հետ, ում կընտրեն Վրաստանում: ՆԱՏՕ-ին անդամակցելու համար Վրաստանում պետք է ավանդույթ դառնա ժողովրդավարական ընտրությունների անցկացումը»:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԸՆՏՐՈՂՆԵՐԸ ԳՐԱՆՑՎԵԼՈՒ ԵՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը արտասահմանում գտնվող Վրաստանի քաղաքացիներին կոչ է անում գրանցվել երկրի հյուպատոսություններում: Այդ մասին ասված է արտասահմանում գտնվող Վրաստանի քաղաքացիներին ուղղված հայտարարության մեջ:

Հոկտեմբերի 27-ին նախատեսված ընտրություններին մասնակցելու համար, արտասահմանում գտնվող ընտրողները, հյուպատոսությունում գրանցվելուց բացի, պետք է հաշվառման անցնեն նաեւ իրենց գտնվող երկրում ստեղծված ընտրատեղամասում կամ հյուպատոսական բաժնում: Գրանցվելու համար Վրաստանի քաղաքացին պետք է դիմում ներկայացնի հատուկ ցուցակում ներգրավվելու համար, նաեւ ներկայացնի Վրաստանի քաղաքացիությունը հաստատող փաստաթղթի պատճենը (ID քարտը կամ անձնագիրը):

Ընտրությունների օրը նույնպես Վրաստանի քաղաքացին պետք է ունենա Վրաստանի քաղաքացիությունը հաստատող փաստաթուղթը (ID քարտը կամ անձնագիրը):

Ընդ որում, Վրաստանի նախագահական ընտրությունների կապակցությամբ, հոկտեմբերի 27-ին, երկրի արտասահմանում գտնվող քաղաքացիների համար 52 ընտրական տեղամաս կբացվի աշխարհի 37 երկրների 44 քաղաքներում, այդ թվում՝ Երեւանում:

Առավել շատ ընտրատեղամասեր կբացվեն Հունաստանում. չորսը՝ Աթենքում եւ երեքը՝ Սալոնիկում: Երեքական ընտրատեղամասեր կգործեն Ադրբեջանում (Բաքու), ԱՄՆ-ում (մեկը՝ Վաշինգտոնում, երկուսը՝ Նյու Յորքում), Թուրքիայում (Անկարա, Ստամբուլ եւ Տրապիզոն) եւ Ուկրաինայում (Կիեւ, Օդեսա եւ Դոնեցկ): Իսպանիայում կբացվի երկու տեղամաս՝ Մադրիդում եւ Բարսելոնում:

Մնացած երկրներում կլինի մեկական ընտրական տեղամաս:

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

ԿՄԻԱՆԱՆ ԱԼՅԱՆՍԻ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՈՒԺԵՐԻՆ

2015 թվականին Վրաստանը կմիանա ՆԱՏՕ-ի Արագ արձագանքման ուժերին:

Այդ մասին Բրյուսելում հայտարարեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս ֆոգ Ռասմուսսենը:

«Վրաստանը մեզ առաջարկել է իրեն ընդգրկել Արագ արձագանքման ուժերի կազմում, եւ մենք ընդունել ենք առաջարկը: Վրացական ստորաբաժանումները կմիանան 2015թ.»,- ասել է նա:

Ռասմուսսենը նշել է, թե Վրաստանը, որպես դաշինքի գործընկեր, առաջին անգամ է միանում, հաղորդում է «ՌԻԱ Նովոստին»:

Ռասմուսսենը նշեց, թե նոյեմբերին կայանալիք Steadfast Jazz վարժանքներին մասնակցելու են նաեւ Ուկրաինան եւ Ֆինլանդիան: Միջոցառմանը կմասնակցի 28 երկրի 6 հազար զինծառայող:

ՆԱՏՕ-Ի ԳՆԱՀԱՏԻՉ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

ՆԱՏՕ-ի գնահատիչ առաքելությունը երկօրյա այցով ժամանել է Վրաստան՝ քննարկելու 2013 թվականի համար Տարեկան ազգային ծրագրի (ANP) ինքնագնահատման փաստաթուղթը:

Այցի ընթացքում, ՆԱՏՕ-ի պատվիրակության անդամները հանդիպումներ ունեցան բոլոր այն կառույցների ներկայացուցիչների հետ, որոնք ներառված են Տարեկան ազգային ծրագրի մշակման գործում:

Հանդիպումների ընթացքում քննարկվել է ANP-ի ինքնագնահատման փաստաթուղթը, որը մեկ շաբաթ առաջ ուղարկվել էր ՆԱՏՕ: Հյուսիսատլանտյան դաշինքը տարվա վերջին գնահատական կտա ANP-ին: Փաստաթղթում նկարագրված է 2013 թվականի համար նախատեսված առաջադրանքների կատարման հետ կապված վիճակը:

ՔՐԵԱԿԱՆ

ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐԸ



Ֆրանսիայում ձերբակալել են Վրաստանի պաշտպանության նախկին նախարար Դավիթ Կեզերաշվիլուն:

Այս մասին հայտնել է Վրաստանի ՆԳՆ-ի մամլո ծառայության ղեկավար Նինո Գիորգոբիանին: Այս տարվա փետրվարի 25-ին Թբիլիսիի քաղաքային դատարանը որոշել է հեռակա կարգով կալանավորել Կեզերաշվիլուն, ինչը կապված էր այն բանի հետ, որ տվյալ ժամանակ նրա դեմ հարուցված էին մի քանի քրեական գործեր: Դատարանի որոշումն առնչվում էր դրանցից մեկին, որը վերաբերում էր «Իմեդի» հեռուստաընկերությունում ամերիկացի գործարար Ջոզեֆ Կեյայի բաժնեմասը խլելուն: Պաշտպանության նախկին նախարարը մեղադրվում է նաեւ խոշոր չափի կաշառք ստանալու եւ էթիլ սպիրտի մաքսանենգությանն աջակցելու մեջ: Կեզերաշվիլին Վրաստանի պաշտպանության նախարար է դարձել 2006 թվականին՝ այդ պաշտոնում փոխարինելով Իրակլի Օքրուաշվիլուն: Կեզերաշվիլին տվյալ պաշտոնը զբաղեցրել է մինչեւ 2008 թվականի դեկտեմբերը:



ՆՈՐ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՀԱՅՏՆԻ ԿԴԱՌՆԱ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ

Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին հայտարարեց, որ Վրաստանի նոր վարչապետի անունը հայտնի կդառնա հոկտեմբերի 27-ին երկրում անցկացվելիք նախագահական ընտրություններից մեկ շաբաթ անց. «Հոկտեմբերի 27-ից հետո մեկ շաբաթվա ընթացքում նոր թեկնածուն կհամաձայնեցվի խորհրդի ու դաշինքի հետ: Փառք Աստծու, որ ես չսխալվեցի: Ես վաղուց հետեւում եմ մի շարք անձանց: Ես ունեմ իմ առաջնահերթությունները, եւ վերջիններս զարգանում են ճշտապես: Լավ է, որ ես ընտրելու հնարավորություն ունեմ: Երկիրը կունենա լավ վարչապետ»: Բիձինա Իվանիշվիլին հավելեց, որ Պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան լավ նախարար է, սակայն իրենք ունեն ավելի լավ նախարարներ:

ԴՐՎԵՑ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԻՄՆԱՔԱՐԸ

Հոկտեմբերի 12-ին Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին անձամբ մասնակցեց Թբիլիսիում նախագահական գրադարանի հիմնաքարի դրման արարողությանը: Նա ընդգծեց, որ այս գործը աննախադեպ է Վրաստանում եւ նախագահական նոր գրադարանում տեղ կգտնեն այն նյութերն ու իրերը, որոնք պատկանում են անմիջականորեն նախագահ Միխեիլ Սաակաշվիլուն: Նախագահի հավաստմամբ, գրադարանը կծառայի քաղաքական կրթությանը, եւ այն կապված կլինի աշխարհի բոլոր գրադարանների հետ:

ԿԳՐԱՆՑՎԻ ԿԵՆՍԱԿԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՄԱՍԻՆ ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾԸ

Քրիստոնեա-ժողովրդավարների՝ կենսական նվազագույնը 150-ից մինչեւ 250 լարի հասցնելու մասին օրենսդրական նախաձեռնությունը ամենայն հավանականությամբ մոտ ժամանակներս կգրանցվի խորհրդարանի բյուրոյում: Ընթացակարգային հարցերով խորհրդարանական կոմիտեն հոկտեմբերի 11-ի նիստում հաստատեց, որ քրիստոնեա-ժողովրդավարների օրինանախագծին կցված կողմնակիցների ստորագրությունները ստույգ են, ինչը թույլ է տալիս նախաձեռնությունը ճանաչել օրինական:

Նշենք, որ կոմիտեն, սահմանված ընթացակարգի համաձայն, ստուգել է 36775 ստորագրությունների ստույգությունը:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

Վրաստանի բնապահպանության եւ բնական ռեսուրսների նախարարությունը մշակել է Վրաստանի հարկային օրենսգրքի օրենսդրական փոփոխությունների ծրար, ըստ որի, արդյունաբերական նպատակներով փայտանյութի ապօրինի փոխադրման եւ իրացման նկատմամբ պատժամիջոցները խստացվում են:

Ծրարն արդեն արժանացել է կառավարության հավանությանը եւ հանձնվել խորհրդարանին՝ աշնանային նստաշրջանում քննարկելու համար:

Գործող օրենսդրության համաձայն, առանց համապատասխան փաստաթղթերի, փայտանյութի փոխադրման դեպքում, եթե դրա շուկայական գինը չի գերազանցում 10 հազար լարին, օրինախախտողը տուգանվում է 500 լարիով, առանց բռնագրավման: Ներկայացված փոփոխության համաձայն, իրավախախտողը կտուգանվի 5 հազար լարիի սահմաններում, իսկ փայտանյութը կբռնագրավվի:

Պետական անտառային ֆոնդի տարածքում ռեսուրսների արդյունահանման ժամանակ հարկ է ստանալ հատուկ թույլտվություն՝ մուծելով սահմանված մաքսատուրքը: Սակայն, բնակչությանը անհրաժեշտ վառելանյութի համար ռեսուրսները կառանձնացվեն սահմանված արտոնյալ գործող օրենքով:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԲԻԶԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ԵՍ ՉԵՄ ՀԵՌԱՆՈՒՄ, ԱՅԼ ԱՆՑՆՈՒՄ ԵՄ ԱՎԵԼԻ ԿԱՐԵՎՈՐ ԱՍՊԱՐԵԶ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

շատ կարեւոր է Վրաստանի համար. միեւնույն ժամանակ ցանկանում եմ ասել, որ մենք ոչ մի կերպ չենք փոխի Վրաստանի ձգտումը դեպի Եվրոպա»,- նշեց Իվանիշվիլին:

Անդրադառնալով Հարավային Օսեթիայում ռուս սահմանապահների գործողություններին՝ Իվանիշվիլին դրանք առնչեց «Արեւելյան գործընկերության» նոյեմբերի վերջին Վիլնյուսում կայանալիք գագաթաժողովի հետ:

«Ինձ համար անհասկանալի է Եվրամիությանը Վրաստանի ինտեգրման կապակցությամբ Ռուսաստանի դիրքորոշումը: Մենք կարող ենք հասկանալ, որ նրանց դուր չի գալիս ՆԱՏՕ-ն, բայց ես Ռուսաստանից նման հակազդում չէի սպասում Եվրամիությանը մեր անդամակցելու հարցում... Ներկայում մենք ընտրություն եւ խաղի լայն դաշտ չունենք սահմանամերձ գյուղերի հարցը լուծելու համար»,- հայտարարեց Իվանիշվիլին:

«ՋԱՎԱԽԵԹԻՆ ՄԻԱԿ ԵՐԿՐԱՄԱՍՆ Է, ՈՐՏԵՂ ՄԵՐ ԹԵԿՆԱԾՈՒՆ ՊԱՐՏՎՈՒՄ Է»

Անդրադառնալով ազգային փոքրամասնություններով հոծաբնակ երկրամասերում առաջիկա ընտրությունների հետ կապված տրամադրվածությունների հարցին՝ Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին լրագրողների հետ հանդիպմանը նշեց, որ Սամցխե-Ջավախեթին միակ շրջանն է, որտեղ, ըստ նախնական հարցումների, Դավիթ Բաքրաձեն հաղթում է Գիորգի Մարգվելաշվիլուն:

Ինչպես նշեց վարչապետը, ինքը մի քանի օր առաջ այցելել էր Ախալքալաքի եւ հանդիպել տեղի բնակչությանը:

«Բնակչությունը պիտի կատարի իր ընտրությունը, եւ ոչ ոք իրավունք չունի ստիպել»,- ասաց Իվանիշվիլին եւ հավելեց, որ իրենք չեն զանգահարում իրենց գործընկերներին կամ Հայաստանի նախագահին բնակչության վրա ազդելու նպատակով, քանի որ մարդկանց պետք է տրվի հասկանալու, վերլուծելու եւ ընտրություն կատարելու հնարավորություն: Ըստ նրա, նոր կառավարությունը չպետք է օգտվի այն գործելաոճից, որը կիրառվում էր վերջին տարիների ընթացքում:

ՎԱՐՉԱՊԵՏԸ ԴԵՄ Է ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻՆ ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆԸ

Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին չէր ցանկանա, որ իշխող «Վրացական երազանք» կոալիցիայի նախագահի թեկնածու Գիորգի Մարգվելաշվիլին, մասնակցի նախագահական ընտրությունների երկրորդ փուլին, եթե չկարողանա հաղթել առաջինում:

«Ես խորհուրդ չէի տա Մարգվելաշվիլուն մասնակցել երկրորդ փուլին: Մարգվելաշվիլու համար վիրավորական կլինի, եթե նա 60 տոկոսից ցածր ձայն հավաքի, եւ նրա փոխարեն ես չէի շարունակի պայքարել»,- լրագրողների հետ հանդիպմանը հայտարարեց Բիձինա Իվանիշվիլին: Նա նաեւ նշեց, որ «Մարգվելաշվիլին իր սեփական կարծիքն ունի եւ կկայացնի այն որոշումը, որն անհրաժեշտ կհամարի»:

Իվանիշվիլին հերթական անգամ իր վստահությունը հայտնեց, որ թեկնածուն վստահ կհաղթի առաջին իսկ փուլում:

20-ԱՄՅԱ ԺԱՄԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին հոկտեմբերի 17-ին հայտարարեց, թե իր գործունեության հաջորդ փուլը, որը կսկսվի քաղաքականությունից հեռանալուց հետո, նախատեսված է քսան տարվա համար:

«Այդ փուլը կտեւի ավելի երկար՝ քսան տարի: Կարծում եմ, որ ես ֆիզիկական հնարավորություններ ունեմ դրա համար: Ես ոչ մի տեղ չեմ հեռանում, այլ անցնում եմ ավելի բարդ ասպարեզ եւ կկարողանամ անել ավելին, քան վարչապետի պաշտոնում: Մեր գլխավոր խնդիրը հասարակությունն է, այն պետք է զարգանա... Հասարակությունը պետք է լինի եվրոպական. դա իմ երազանքն է: Ես հասարակությանը խոստացել եմ, որ քաղաքականության մեջ լինելու եմ երկու-երեք տարի եւ կարծում եմ, որ դա ինձ մոտ արդյունավետ ստացվեց»,- հայտարարեց Իվանիշվիլին:

Ավելի վաղ, Իվանիշվիլին հայտարարել էր, որ մտադիր է քաղաքականությունից հեռանալ նախագահական ընտրություններից մի քանի շաբաթ հետո եւ զբաղվել քաղաքացիական սեկտորի զարգացմամբ: Ընդսմին, նա խոստացել էր, որ, ընտրություններից մեկ շաբաթ անց, կհրապարակի կառավարության նոր ղեկավարի անունը:

«ԱԶԳԱՅԻՆՆԵՐԸ» ԻՐԵՆՔ ԻՐԵՆՑ ԵՆ ՈՂՆՉԱՑՆՈՒՄ

Անդրադառնալով նախկին կառավարող կուսակցության ներկայիս գործունեության հարցին՝ Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին, տեղական ՁԼՄ-ների գլխավոր խմբագիրների հետ հանդիպմանը հայտարարեց, որ իշխանության ինը տարիների ընթացքում Սաակաշվիլու թիմը «բռնաբարում էր Վրաստանը»: Նրա խոսքով, նախագահի թիմը «բռնություն էր իրականացնում երկրի քաղաքացիների, գործարարների, հասարակայնության նկատմամբ»:

Վրաստանի վարչապետը, մեկնաբանելով արտասահմանյան մի շարք լրատվամիջոցների հրապարակումները, որոնցում կարծիք էր հայտնել, թե իր նպատակը երկրի նախկին կառավարող կուսակցության՝ «Միասնական ազգային շարժման» ոչնչացումն է, հայտարարեց, որ նա ինքն է իրեն ոչնչացնում:

«Ես չեմ եկել որեւէ մեկին ոչնչացնելու եւ թշնամանք սերմանելու համար... Ես շատ բան կարող եմ ներել անձնական շփման պարագայում, ինչի պատճառով, կինս հաճախ է ինձ դիտողություն անում: «Ազգային շարժումն» իր ժողովրդի նկատմամբ բռնություններ է կիրառել: Նրանք իրենց վարքագծով իրենք են իրենց ոչնչացնում»,- հայտարարեց Իվանիշվիլին:

ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ ԱՆՀԱՆԳՍՏԱՑՆՈՂ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Վրաստանի վարչապետի՝ գլխավոր խմբագիրների հետ հանդիպման ընթացքում ժամանակի սղության պատճառով, առանձին ՁԼՄ-ների ղեկավարները, այդ թվում՝ «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, չկարողացան հրապարակավ առաջադրել իրենց հետաքրքրող հարցը, թեեւ հանդիպման վերջում, «Վրաստանի» խմբագիրը, վարչապետի հետ առանձնազրույցի ժամանակ գրավոր ներկայացրեց Վրաստանի հայկական դպրոցների համար հիմնախնդրային դարձած համարյա բոլոր առարկաների ուսուցիչների պակասի հարցը: Այդ հարցի կարգավորման իրատեսական միջոցներից են Թբիլիսիի Իլիայի անվան համալսարանում հայկական բաժնի վերաբացումը եւ Հայաստանի կառավարության հետ պայմանավորվածությամբ՝ Հայաստանի բուհերն ավարտող վիրահայ երիտասարդների՝ առնվազն երեք տարով Վրաստանի հայկական դպրոցներում աշխատելու պարտավորության ստանձնումն է: Բացի այդ, թերթի խմբագիրը բարձրացրել է նաեւ Վրաստանում հրատարակվող հայերեն դասագրքերի հետ կապված հարցը:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԸՆԴԳԾՎԵՑ ՓՈԽՇԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

չապետին ընդունելության համար ու տեղեկացրել Հայաստանի գյուղատնտեսության նախարարությունում ու Հայաստանի պետական եկամուտների կոմիտեում ունեցած հանդիպումների արդյունքների եւ ձեռք բերված պայմանավորվածությունների մասին:

Հանդիպման ընթացքում, քննարկվել են գյուղատնտեսության ոլորտում երկկողմ կապերի սերտացման եւ համագործակցության հեռանկարային

ուղղությունները: Անդրադարձ է եղել երկու երկրների միջեւ գյուղատնտեսական արտադրանքի ներմուծման ու արտահանման ծավալներին:

Հանդիպման ավարտին, Հայաստանի վարչապետը ջերմ ողջույններ է փոխանցել Վրաստանի իր գործընկերոջը:

Նույն օրը, Վրաստանի գյուղատնտեսության նախարարը հանդիպում ունեցավ իր հայ գործընկեր Սերգո Կարապետյանի հետ:

Հայաստանի գյուղատնտեսության նախարարը հյուրերին տեղեկացրեց, որ պետական աջակցության ծրագրերի ու բարենպաստ բնակլիմայական պայմանների արդյունքում, գյուղատնտեսական տարին բարեհաջող էր, եւ ներկայացրեց գյուղոլորտի բավականին տպավորիչ արդյունքները:

Իր հերթին, Վրաստանի գյուղատնտեսության նախարարը ներկայացրեց իր երկրի գյուղատնտեսական առաջանցիկ ծրագրերը՝ անդրադառնալով գյուղատնտեսական ռեսուրսների համատարած հաշվառմանը, ապահովագրական ծրագրերին, կոոպերացիային: «Վերջին ամիսներին առեւտրային բանկերը երկարաժամկետ վարկային ռեսուրսներ են տրամադրել նոր կազմավորվող գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցելու նպատակով, եւ մենք արդեն ընդունել ենք գյուղատնտեսական կոոպերացիայի մասին օրենքը»,- տեղեկացրեց Վրաստանի գյուղատնտեսության նախարարը:

Հանդիպման վերջում կողմերը եւս մի անգամ շեշտել են վրաց-հայկական տնտեսական կապերի ընդլայնման հնարավորությունը, իսկ Վրաստանի գյուղատնտեսության նախարար Շալվա Փիփիան Հայաստանի գյուղատնտեսության նախարարին աշխատանքային այցով հրավիրել է Վրաստան:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԷԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

եւ Քվեմո Քարթլի (Վրաստան):

Վրաստանը ներկայացնում էր Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարության առաջին փոխնախարար Թենգիզ Շերգելաշվիլին: Հայաստանը, ներկայացնում էր Հայաստանի Տարածքային կառավարման նախարարության առաջին փոխնախարար Վաչե Տերտերյանը:

Համաժողովն ուներ երկու նպատակ՝ տեղեկացնել Հայաստանի ու Վրաստանի սահմանային տարածքներում բնակվող լայն հասարակայնությանը այն հնարավորությունների մասին, որոնցով նրանք կարող են օգտվել՝ մասնակցելով Եվրամիության տվյալ ծրագրին, իսկ երկրորդ նպատակը խնդիրների եւ հնարավոր լուծումների քննարկումն էր երկու կողմերի միջեւ:

Համաժողովի մասնակիցները ներկայացրին իրենց մարզերի ռեսուրսներն ու ներուժը, ինչպես նաեւ հնչեցին առաջարկություններ տարբեր ոլորտների զարգացման ու միջկառավարական համագործակցության վերաբերյալ:

Նմանատիպ համաժողով տեղի էր ունեցել նաեւ Թբիլիսիում, հոկտեմբերի 4-ին:

Միջպետական տարածքային կոնֆերանսը տեղի է ունեցել ԵՄ-ի «Արեւելյան գործընկերության տարածաշրջանային համագործակցության» ծրագրի շրջանակներում:

Ծրագիրը նախատեսվում է գրանտներ տարբեր նախագծերի համար: Ծրագրի շրջանակներում, ԵՄ-ը մասնակից երկրներին հատկացնում է ընդհանուր 12,5 մլն եվրո: Նրանցից 1,8 մլն՝ Հայաստան-Վրաստանին, իսկ ծրագրային կառավարման ապահովման համար կհատկացվի՝ 0,875 մլն եվրո:

Սակայն, պետական եւ հասարակական կազմակերպությունները կարող են ստանալ գրանտներ, եթե ապահովեն 10% ինքնաֆինանսավորում: Գրանտները կլինեն սկսած 20000-ից մինչեւ 250000 եվրո:

ԱՄՓՈՓՎԵՑԻՆ «ՆԻՆՈԾՄԻՆԴԱ-ԲԱՎՐԱ» ԱՆՑԱԿԵՏԻ ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ջող նախաձեռնություն է, որը վերաբերում է վրաց-հայկական սահմանի «Նինոծմինդա-Բավրա» անցակետում ինտեգրված կառավարման համակարգի ներդրմանը:

Նրա խոսքով, այդ նախագիծն իրականացվում է ինչպես Արեւելյան Եվրոպայի, այնպես էլ՝ Անկախ Պետությունների Համագործակցության երկրներում:

«Սա շատ հաջող մոդել է, որն ընդունվել է Եվրամիությունում, եւ նախատեսում է բաց ու անվտանգ սահմանների գոյություն: Համապատասխանաբար, մաքսանենգ ապրանքների արտահանման, թրաֆիկինգի եւ բացասական այլ երեւույթների սպառնալիքի վտանգը հասցվել է նվազագույնի: Այնպես որ, այս մոդելը Եվրամիությունում լավ է աշխատում, եւ մենք շատ ուրախ ենք, որ այն կարող ենք ներդնել նաեւ ուրիշ երկրներում: Նախագծի իրականացմանը, Վրաստանի եւ Հայաստանի հետ միասին, մասնակցում են Եվրամիության անդամ երկրները, տվյալ դեպքում՝ Լիտվան ու Ֆրանսիան»,- նշել է Ֆիլիպ Դիմիտրովը: